

դահներու կրնամանին որ ստակներն խորշ մը թաղելով կ'ուրախանան . ռամիկը՝ որովհետեւ ասոնք եկամուտներն զարգարանաց բաներու չեն չռայլեր և զեղխութիւն չեն ըներ՝ անխորհրդաբար վրայ կը բերէ թէ վաճառականութիւնը չեն բանեցներ . սակայն յանօգուտս չիվատնած ստակներն՝ սնտուկներնուն մէջ չեն պահեր , հապա կը սփռեն բանեցներով կամ փոխ տալով օգտակար աշխատութեանց գործածող անձանց . այն ստակով գործաւորներ կ'ապրին և արուեստագործութիւնը կը կենդանանայ . յետոյ շահը իրենց կը դառնայ որպէսզի դարձեալ ուրիշ գործաւորներ ապրեցնեն , և այսպէս յանհունս առաջ կ'երթայ . ոչ մէկ անգամ է ըրած բարիքներն այլ միշտ :

— Բայց մարդկանց մէկ ուրիշ անիրաւութիւն ալ ցուցնեմ . մինչդեռ մէկ կողմանէ ազահ կը համարուի ինչքն անշահ կերպով չի վատնողը՝ միւս կողմանէ շատերը նախանձու և տմարդի աչքով կը տեսնեն մեծատանց չռայլութիւնը . կը նեղանան անոնց հանգէսներուն փառաւորութեանը դէմ , կամ երբ որ չորս կողմերնին զարգարուն սենեկապաններ պատած և իրենք կառաց մէջ երկնցած փողոցներէն կ'անցնին : Ասիկա ամօթալի զգացմունք մ'է զոր մարդ սրտին մէջ պէտք է մարէ . թէ պէտեւ ապրուստ գտնողները չեն այս ըսողները՝ ինչպէս են կապերտագործը , նկարիչը , բարակ գործուածներ ընող հիւսը , զրուագագործը , հայելիներ զընողը , ոսկեզօծողը , պղնձեղինաց և ապակեղինաց գործատէրը՝ որոնք փառաւոր սենեակներ կը զարդարեն . ինչպէս նաև կառապանները , ժապաւէն վաճառողները , համետագործը , որ այն հարուստ կառքերը շիներ են , և գեղեցիկ ձիերը դարմանողները . դարձեալ հապը տանք , ակունք , կօշիկ , նորելուք բաներ և զգեստ վաճառողները , շատ աղէկ վաստրկած ըլլալով անոնցմէ : Ի՞նչ հետեցներու է ուրեմն այս առերևոյթ հակասական դիտողութիւններէ . այս՝ թէ ամենայն ոք առանց իր եկամուտը չռայ

լելու և մանաւանդ եկամուտէն աւելին , իրեն ստացուածոցը և աստիճանին համեմատ պէտք է ապրի : Բայ ասկէ հարուստները ուրիշ բարիք ալ կ'ընեն հարստութիւնին աղէկ կերպով գործածելով . երբ ընտիր դատումն ունին արուեստական գեղեցկին՝ գեղարուեստները կը քաջալերեն . մատենաք , նկարք , անդրիք , գովելի միջոց են ստակներն գործածելու և ընկերութե՛ բարիք ընելու , աղէկ ուղղութիւն տալով մարդկային մտաց : Հարստութիւնը կրնան նաև միջոց ըլլալ երկրագործութեան , բնագիտութեան , մեքենականութեան մէջ փորձեր ընել տալու , զոր ստակ չունեցողները կարողութիւն չունին ընելու . առանկ ուրեմն հարուստները անբաւ միջոց ունին եկամուտներն օգտակարապէս մարդկութե՛ գործածելու : Գովելք ուրեմն ընչից պատուական գործածութիւնը և պախարակներ միայն անշահ ծախքերն և դրամագլխոց վատնումը :

ԹԱԲԷ

Կը Հարունակոչի :

ՀԻՆԳ. ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՁ

ՃԱՆԱՊԱՐ ՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ :

(Տես երես 220 :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Պոչրնոյի մայրաքաղաքը . — Պիտիոմաներուն կղզիները . — Գոնտորք . — Տորքորին տագնապները . — Նորին զգուշութիւնք . — Օրոմէջ յարձակում մը . — Պատեանին պատառտումը . — Անկումը : — Վսեմ անձնաւորութիւն . — Լճին հիւսիսային ափը :

Վիկտորիան Չատ լիճը հասնելով , անանկ օդոյ հոսանքի մը հանդիպելէր որ զինքը աւելի դէպ 'ի արեւմուտք կ'ուղղէր . երկնից կամարին վրան եղող մէկ քանի ամպեր օրուան ջերմութիւնը կը բարեխառնէին , և այն ընդար-

ձակ ջրին վրայէն քիչ մը հով կը բանէր. այլ ժամը մէկին ատենները գունտը՝ լճին այդ մասը խոտորնակի կը տրած ըլլալով, դարձեալ դէպ 'ի ցամաք յառաջեց եօթը կամ ութ մղոն միջոցի չափ:

Տորդորը, որ իսկզբան քիչ մը նեղ սրտութիւն զգացեր էր այն ուղղութեանը համար, ալ տրտունջը լռեցուց երբ զֆուքա քաղաքը, Պուրնուին հըռչակաւոր մայրաքաղաքը առջևը տեսաւ, և կրցաւ առ վայր մը դիտել այն ճերմակ կաւէ պարիսպներով պատած քաղաքը. մէկ քանի անարուեստ մզկիթք կոչտաբար կ'ամբառնային այն խաղութեանը մէջէն: Տանց գաւթներուն և հրապարակաց մէջ՝ արմաւենիք և քառու ծառեր կը տեսնուէին, որոնց դադաթները անանկ մեծ սաղարթաւոր գմբէթներով պսակած էր՝ որ հարիւր ոտքէն աւելի լայնութիւն ունէին: Ճոյ դիտողութիւն մ'ըրաւ թէ այն ահագին մեծութեամբ հովանոցները արեղակնային ճառագայթից սաստիկութեանը համեմատ էին, և այս դիտողութենէն Նախախնամութեան հաշտարար հետեւանքներ հանեց:

Քուրան իրապէս երկու որիչ քաղաքներէ կը բաղկանայ, մէկմէկէ տեւտալով բաժնուած, որ երեք հարիւր գրկաչափ լայն ճամբայ մըն է, և այն ատեն հետի ու ձիաւոր բաղմութեամբ հոծ էր: Մէկ կողմէն կը պարզի ճիւքաղաքն իր բարձր ու լուսաւոր տուներովը. միւս կողմէն ալ կը ձգի աղբատին քաղաքը, որ ցած ու կոնաւոր հիւղերու կոյտ մըն է, ուր աղքատ ժողովուրդը տառապանաց կեանք մը կը վարէ, որովհետեւ ֆուքա՝ ոչ վաճառական և ոչ ճարտարարուեստ քաղաք մըն է:

Քէննըտի քիչ մը նմանութիւն գտաւ իր էտիմպուրկին հետ, եթէ էտիմպուրկը դաշտավայրի մը մէջ շինուած ըլլար, հանդերձ իր երկու բոլորովին որիչ քաղաքներովը:

Սակայն ճանապարհորդք հազիւ կա

րող եղան այդ հայեցումաճքին դիտակցութիւնն ստանալ, վասն զի այնպիսի դիւրափոփոխութեան մը պատճառաւ որ յատուկ է այն երկիրներու օդոյ հասնաց, յանկարծ հակառակաշունչ հով մը ըմբռնեց զիրենք ու նորէն քառասուն մղոնի չափ Չատ լճին վրայ քըշեց:

Այն ատեն նոր տեսարան մը բացուեցաւ առջևին, կրնային լճին այն բաղմաթիւ կղզիները թուել, որ Պիտտիոմահից բնակութեան վայրք են, ազգ զարհուրելի արիւնկղակ հինից, որոնք Սահարայի Դուարէկներու չափ երկիւղալի են: Այն վայրենիք արիաբար կը պատրաստուէին նետերով ու քարերով զՎիկտորիան ընդունելու, սակայն գունտը արագաբար սահելով անցաւ շուտով այն կղզիները, որոնց վրայէն կարծես թէ հսկայ բլէզի մը պէս կը թռչտէր:

Այս ատենս Ճոյ հորիզոնը դիտելու հետ ըլլալով, դարձաւ ըսաւ ֆէննըտիին.

— Ստոյգ, պարոն Տիք, դուն որ միշտ որսորդութիւն կ'երազես, ահա քեզի գործ:

— Ի՞նչ կայ, Ճոյ:

— Այս անգամուն տէրս չարգելու պիտի քու հրակոծութիւններդ:

— Բայց ի՞նչ կայ:

— Կը տեսնես հոն տեղ այն խոշոր թռչուններու խումբն որ դէպ 'ի մեզի կու գան:

— Թռչունք, ըսաւ տորդորը, դիտալ կը ձեռքն առնելով:

— Կը տեսնամ, պատասխանեց ֆէննըտի տասուերկուքի չափ կան:

— Տասնչորս, թէ կը ներես, պատասխանեց Ճոյ:

— Ո՛վ թէ անանկ վնասակար տեսակէ մը ըլլային, որ գորովազուծն Սա մուէլ ինծի հակառակելու բան մը չունենար:

— Բան մը պիտոր չունենամ ըսելու, պատասխանեց Ֆէրկըսըն. միայն թէ կը փափագէի որ այդ թռչունները մեզմէ հեռանային:

— Կը վախնաս այն թռչնականներէն, ըսաւ ճոյ:

— Գոնտորք են, ճոյ, և շատ մեծ հասակաւ. և եթէ վրանիս յարձրկէին...

— Շատ աղէկ, մենք զմեզ կը պաշտպանենք, Սամուէլ. հետերնիս զինաւորան մ'ունինք զանոնք ընդունելու: Չեմ կարծեր թէ այդ կենդանիք այնչափ երկիւղալի ըլլան:

— Ո՛վ գիտէ, պատասխանեց տղադորը:

Տասը վայրկեան ետքը թռչնոց երաւ մը հրացանի հեռաւորութեամբ մօտեցեր էր. այն տասնուչորս թռչուններն իրենց կերկերեալ ձայներովն օդը կը լծնդացնէին, և դէպ 'ի վիկտորիս կը յառաջէին, աւելի կատղած քան թէ սարսափած անոր ներկայութենէն:

— Ի՛նչպէս կը կանչուըռտեն, ըսաւ ճոյ. ի՛նչ աղմուկ: Կ'երևնայ թէ չեն ակորթիր որ այլք իրենց իշխանութիւնը յափշտակեն, և իրենց նման թըռչին:

— Յիրաւի, ըսաւ որսորդը, զարհուրելի երևոյթ մ'ունին, և զիս կրնային վախցնել եթէ Բըրտի Մօրի քարապինայով մը զինեալ ըլլային:

— Ատոր պէտք չունին, պատասխանեց Ֆէրկըսըն, որ երթալով լուրջ կերպարանք մը կ'առնուր:

Գոնտորք թռչելով անհուն մեծութեամբ չըջանալներ կը ձևացնէին, և

իրենց բոլորակները երթալով հեռզհե. տէ վիկտորիայիս չորս կողմը կ'անձկանային. չերեակայելու երազութիւն երկինքը կը գծէին, մերթ ընդ մերթ գնտակի երազութեամբ գահավիժելով, և յանկարծական ու յանդուգն անկեամբ մը իրենց անկման գիծը կ'որոշելով:

Տղքդորն անհանգիստ, որոշեց մըթն ոլորտին մէջէն վեր բարձրանալ որ այն դրացեաց վտանգէն ազատի. անմիջապէս գունտին ջրածինը ընդարձակեց որ շատ չուշացաւ վեր ելլելու: Սակայն գոնտորք ալ հետը մէկտեղ վեր ելան, չուզելով զայն թողուլ:

— Կարծես թէ մեզի թշնամութիւն ընելու միտք ունին, ըսաւ որսորդը քաւալինան լեցնելով:

Եւ յիրաւի այն թռչունները մօտենալու հետ էին, մէկ քանին ալ մինչև յիսուն ոտք հեռաւորութեամբ մօտենալով կարծես թէ ֆէններտիին զէնքերը արհամարհել կ'ուզէին:

— Բուռն իղձ մը կը զգամ հարուածելու, ըսաւ ֆէններտի:

— Ոչ, Տիք, ոչ, անպատճառ չկատ. ղեցընենք ատոնք. ապա թէ ոչ մեզի դէմ յարձրկելու դրդուել կ'ըլլայ:

— Բայց հեշտեալ զանոնք կը հոգամ:

Կը շարունակուի:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ